Հարգարժան տիկին Սեդա Ղուկասյան, ի պատասխան Ձեր հարցման տեղեկացնում եմ հետևյալը.

1. Ես քաղաքացիների ընդունելության առանձին օրեր ու ժամեր չեմ սահմանել: Ես ընդունելություն կատարում եմ ամեն օր, օրվա 2-րդ կեսին իմ գրասենյակում: Մարդիկ զանգահարում են, պայմանավորվում գալիս են հանդիպման: Ընդունելություններ եմ կազմակերպում նաև իմ կողմից պարբերաբար կազմակերպվող մարզային այցելությունների ընթացքում՝ տեղում լսելով քաղաքացիների դիմումները:

2. Քաղաքացիները դիմում են ամենատարբեր խնդիրներով՝ անձնական, կրթական, սոցիալական, իրավական և այլն: Հաճախ գրում են նաև էլեկտրոնային եղանակով, որոնց պատասխանում եմ, եթե խնդիրը իմ լիազորությունների շրջանակում է: Իմ գրասենյակում գործում է խորհրդատվական խումբ, որն անվճար իրավական խորհրդատվություն է տրամադրում մեզ դիմող քաղաքացիներին բոլոր ոլորտներում:

Ելնելով իմ աշխատանքի և կարգավիճակի առանձնահատկությունից (ես հանդիսանում եմ §Ջավախք¦ հայրենակցական միության նախագահը)՝ ինձ ավելի հաճախ դիմում են ջավախքցիները՝ հիմնականում առողջապահական և կրթական խնդիրներով: Ձեր մատնանշած ժամանակահատվածում Ջավախքից ժամանած սոցիալապես անապահով 30 հիվանդի համար միջնորդագիր եմ ներկայացրել ՀՀ Առողջապահության նախարարություն, նրանց բուժումը ՀՀ առողջապահական հաստատություններում պետական պատվերով իրականացնելու խնդրանքով, որոնցից 18-ի դեպքում հարցը լուծվել է: Ինձ են դիմել նաև ՀՀ բուհերում սովորող սոցիալապես անապահով 35 ջավախքցի ուսանողներ՝ ուսման վարձի մասնակի փոխհատուցման խնդրանքով: Այս հարցով ես դիմել եմ տարբեր բարեգործական հիմնադրամների և նրանց մի մասի հարցը լուծվել է: Մի շարք ջավախքցի սոցիալապես անապահով ուսանողների համար դիմել եմ տարբեր բուհերի ղեկավարություններին, որի արդյունքում ուսանողներին արհմիությունների միջոցով տրվել է ֆինանսական աջակցություն կամ կիրառվել է ուսման վարձի զեղչ:

Ջավախքցի երիտասարդների դիմումով ձևավորել, կազմակերպել և նյութական աջակցություն ենք ցուցաբերել Բազե 2017-ին մասնակցած §Ջավախք¦ թիմին: Մեզ բազմաթիվ դիմումներ են հղվում նաև մշակութային ոլորտում: Այդ առումով մասնակցել կամ կազմակերպել ենք բազմաթիվ մշակութային միջոցառումներ (տոնակատարություններ Վրաստանի Սամցխե-Ջավախք երկրամասում և Հայաստանի տարբեր շրջաններում, գրքերի հրատարակություն և շնորհանդես, երգերի տեսահոլովակների նկարահանում և շնորհանդես, համերգներ, կինոֆիլմերի դիտում, թանգարաններ այցելություն և այլն):

3. Քանի որ ինձ հղված դիմում-խնդագրերը գերակշիռ մեծամասնությամբ ուղիղ կոնտակտով են և բանավոր, ցավոք, թվերով ներկայացված ամբողջական վիճակագրություն չեմ կարող ներկայացնել: Միևնույն ժամանակ Ձեր հարցումը հրաշալի հուշում է մեզ՝ այսուհետ հաշվառում իրականացնելու համար:

4. 2009թ. իմ առաջարկով ՀՀ ԱԺ-ն ընդունեց օրենք, համաձայն որի ջավախքցի ուսանողների համար ՀՀ բուհերում կիրառվում է ՀՀ քաղաքացիների համար սահմանված ուսման վարձերի սակագները: Ելնելով ներկա վիճակից՝ քննարկում եմ առողջապահության ոլորտում ևս նմանատիպ առաջարկով հանդես գալու նպատակահարմարությունը, որպեսզի ՀՀ առողջապահական հաստատություններում ջավախքցիների նկատմամբ կիրառվի բուժսպասարկման ՀՀ քաղաքացիների համար սահմանված սակագները: Առայժմ այդ հարցը հիմնականում լուծվում է մեր միջնորդագրերով, գերատեսչական հանձնարարականներով և բուժհաստատությունների ցուցաբերած բարի կամքով:

Իսկ ՀՀ քաղաքացիների ներկայացրած առաջարկները (որոնք պատգամավորի լիազորությունների շրջանակներում են) քննարկում եմ խմբակցությունում և կառավարության մեր գործընկերների հետ, և հնարավորության սահմաններում դրանք արտացոլվում են կառավարության օրենդրական նախաձեռնություններում: